ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Ծովամթերքների և հատկապես ձկան համաշխարհային արդյունահանումը՝ աճի միտում ունի: Դրան նպաստում են բնակչության թվաքանակի աճով պայմանավորված սպառման ծավալների աճը, ձկնորսության տեխնիկական միջոցների կատարելագործումը, մեծաքանակ որսի ստացման հնարավորությունը: Որսի գրեթե 80%-ը օգտագործվում է որպես սնունդ (մարդու համար սպիտակուցների հիմնական աղբյուրը): Մնացած մասի վերամշակումից ստացվում են ՝ դեղամիջոցներ (ձկան յուղ), սննդային հավելումներ, ձկան ալյուր, անասնակեր: Բոլոր աշխարհամասերի բնակչության կերակրացանկում ծովային մթերքները առանձնակի տեղ ունեն:

Ծովային որոշ կենդանիներ նաև արդյունաբերական նշանակություն ունեն, ինչպես օրինակ՝ թերթախոիկավորները (սադափ), փեղկավոր փափկամարմինները (մարգարիտ): Այս տեսակների որսը մեծ չափերի է հասնում հատկապես Չինաստանում, Կորեայում, Ճապոնիայում, ԱՄՆ-ում և եվրոպական ծովափնյա մի շարք երկրներում: Ներկայումս դրանց կուտակման վայրերը բնապահպանական կազմակերպությունների կողմից նույնպես հսկողության և պահպանության տակ են վերցվել:

Գետային ձկնաբուծությանը և ձկնորսությանը մեծ վնաս է հասցնում ջրատեխնիկական շինարարությունը՝ գետերի վրա կառուցվող ամբարտակները, էլեկտրակայանները, ջրամբարները, ջրանցքները և փոքր ՋԷԿ-ը, որոնք հիմնովին փոխում են գետերի բնական ռեժիմը: Առավել նկատելի վնասն այն է, որ արհեստական կառույցները փակում են ձկների դեպի ձվադրման վայրերն անցնելու ուղիները: Հայտնի է Կուր գետում սաղմոնի օրինակը: Նախկինում այդ ձուկը Կուրից՝ Խրամ, իսկ այնուհետև, Դեբեղի վտակներով բարձրանում էր մինչև Ջորագետի և Փամբակի վերին հոսանքները: Սակայն Կուր գետի վրա ստեղծված արհեստական կառույցները վերջնականապես փակեցին սաղմոնի մուտքը դեպի Հայաստանի գետերը:Նույնը կարելի է ասել Հրազդան գետի ՋԷԿ-ների մասին: Դրանք պատնեշել են ձկների ճանապարհը Արաքսից դեպի Սևան և հակառակ ուղղությամբ: Նման երևույթները կանխելու համար սովորաբար ջրատեխնիկական կառույցներին կից ստեղծում են շրջանցման հատուկ ջրանցքներ, որոնց միջոցով ձուկը կարողանում է ձվադրման համար հասնել գետերի վերին հոսանքները: Խոշոր ջրատեխնիկական հանգույցների մոտ, որտեղ ամբարտակը շրջանցել հնարավոր չէ, հիմնում են հատուկ ձկնաբուծարաններ, որտեղ արհեստական եղանակներով ձկնիկներ են բուծում և զանգվածաբար բաց թողում գետի մեջ: